

ԵՄ օրենսդրության փոխառումը և
իրականացումը. հիմնախնդիրներ,
մարտահրավերներ.
Էստոնիայի օրինակը

AEPLAC-ի սեմինար
դեկտեմբերի 18, 2009թ.
Քեյթ Կասեմեթս

Փոխառումը երրորդ երկրում

Միակողմանի

Երբ որևէ երրորդ երկիր իր ներքին իրավական դաշտում ընդունում է նոր կանոնակարգեր, որոնք պարտադիր ուժ չունեն և որոնց ստեղծման գործում տվյալ երկիրը չի մասնակցել:

անհրաժեշտ է եվրոպական ինտեգրման հարցում առաջընթաց գրանցելու համար

Տարբեր շրջանակներով սահմանված փաստաթղթեր են ընկած այս գործընթացի հիմքում (ԳՀՀ, ԵՀՔ):

Փոխառում. ինստիտուցիոնալ կառուցվածքը Էստոնիայում Կազմակերպում

Ճյուղային նախարարությունները պատասխանատու են իրենց ոլորտների համար (պարտավորությունների աղյուսակներ):

Արդարադատության նախարարությունը (մասնավորապես՝ ԵՄ իրավունքի բաժինը) խորհրդատվություն է տրամադրում և համակարգում է օրենսդրական գործընթացը և քաղաքականությունը՝ կազմակերպում է կլոր սեղաններ ԵՄ օրենսդրության վերաբերյալ

պարբերաբար ստուգում է տեղական օրենսդրության համապատասխանությունը ԵՄ օրենսդրության հետ

Համակարգումն իրականացվում է Եվրոպական ինտեգրման գրասենյակի և Բարձրաստիճան քաղաքացիական ծառայողների խորհրդի կողմից:

Փոխառման հիմքերը Էստոնիայում մինչ անդամությունը

Իրավական հիմքերը և միջոցները

Եվրոպա համաձայնագիր (ասոցիացման համաձայնագիր);

Օրինաստեղծ գործունեության կանոններ (Կառավարության
որոշում թիվ 279; 28.09.1999թ.);

Եվրոպական միության օրենսդրությանը Էստոնական
օրենսդրության ներդաշնակեցման մեթոդաբանություն:

Բանակցությունների գործընթաց, ցուցակների քննում:

ԵՄ օրենքների ժողովածուի ընդունման ազգային ծրագիր
(տարեկան) – կարելի է համեմատել 2009-2011 թթ.
գործողությունների ծրագրի հետ:

Փոխառման սկզբունքները Էստոնիայում

Էստոնական ակտեր, որոնցով ընդունվել են ԵՄ նորմերը
օրենքներ

շրջանակային օրենքներ չեին թույլատրվում

հետևաբար, ընդունվեցին շատ մանրակրկիտ օրենքներ
կանոնակարգեր

Որպես օրենքների իրականացման փաստաթղթեր կամ առանձին
իրավական գործիքներ

Եթե հրահանգը սահմանափակում էր հիմնական ազատությունները,
այն պետք է փոխվեր օրենքով և համապատասխանեցվեր
հստակության և իրավական որոշակիության սկզբունքներին:

Ինչպե՞ս փոխառել

Փոխառումից առաջ պատասխաններ էին տրվում հետևյալ հարցերին :
Արդյո՞ք օրենքի նախագծի կանոնակարգման ոլորտը ԵՀ/ԵՄ իրավասության
ոլորտում է:

Արդյո՞ք ԵՄ-ը կանոնակարգում է այդ ոլորտը: Ինչպե՞ս:
Որո՞նք են տվյալ ոլորտում ԵՄ հիմնական նպատակները: ԵՄ իրավունքի որևէ
ընդհանուր դրույթ վերաբերվո՞ւմ է տվյալ ոլորտին:
Ի՞նչ է ստում Եվրոպական շրջանակի համաձայնագիրը Էստոնիայի ստանձնած
պարտավորությունների վերաբերյալ:

Ի՞նչ պարտավորություններ է ստանձնել Էստոնիան Եվրոպական օրենքների
ժողովածուի ընդունման ազգային ծրագրում և բանակցությունների ընթացքում:
Եվրոպական արդարադատության դատարանում քննվե՞լ են, արդյոք, տվյալ
ոլորտի հետ առնչվող դրույթներ պարունակող օրենքներ:

ԵՄ իրավական ակտերը փոփոխության ենթարկվե՞լ են կամ արդյո՞ք ենթակա են
փոփոխության:

Հիմնախնդիրները և մարտահրավերները

Մեկ հրահանգի փոխառումն ու իրականացումը շատ հաճախ ենթադրում է քաղաքական դաշտի լայնածավալ բարեփոխում (ամբողջ գաղափարախոսության վերանայում և համապատասխան գործադիր ինստիտուտների զարգացում):

ԵՄ իրավական սկզբունքները միշտ չէ, որ համապատասխանում էին Էստոնական օրենսդրության տրամաբանությանը և անխոտան տեղավորվում էստոնական իրավական համակարգի մեջ
Լեզվական խնդիրներ:

Պատասխանատու նախարարությունների աշխատակիցների գիտելիքների մակարդակը ցածր էր, որի արդյունքում հաճախ ԵՄ իրավական ակտերը բառացի էին թարգմանվում և կիրառվում որպես Էստոնական օրենք կամ ենթաօրենսդրական ակտ:

Տեղական մարտահրավերների և եվրոպական ինտեգրման ջանքերի միջև հավասարակշռության ապահովումը դժվարին գործ էր: